

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ  
Թեմա՝ Փայտամշակում. եկեղեցական դռներ  
Հետազոտող՝ Լուսինե Բաղդասարյան  
Ղեկավար՝ Լ. Իսկոյան

## Բովանդակություն

Ներածություն.....	3
Փայտամշակում. Եկեղեցական դռներ.....	4-10
Եզրակացություն .....	11
Օգտագործված գրականության ցանկ .....	12
Հավելված.....	13-18

## Ներածություն

Փայտարվեստը սերտորեն շաղկապված է հայ ժողովրդի կենցաղին, նրա ապրելակերպին: Փայտից էին ստեղծվում ափսեն, գոպն ու գոպնոցը, մահճակալն ու երեխայի օրորոցը, եկեղեցու դուռը, գահն ու գավազանը, մոմակալը, գրակալը, դաջի/դրոշմի կաղապարն ու պաշտպանիչ հմայիլ-դաղդղանը, կուժն ու սկահակը, թռչնակերպ աղամանն ու գաթանախշիչը, պատշգամբի ձևավորված հատվածը: Հղկված փայտե տախտակը հատուկ մշակվում էր նկարի կամ սրբապատկերի համար, նաև դառնում էր ձեռագրի կազմ: Փայտը, մինևույն ժամանակ, գործիք էր, գործիքի անհրաժեշտ մաս, որով մշակվում, հղկվում, գեղարվեստական ձևավորում էր ստանում մեկ այլ փայտի հատված:

Հայաստանի փայտանյութի հարուստ տեսականին՝ կաղնուց, հաճարենուց, լորենուց, ծիրանենուց, դեղձենուց, ընկուզենուց, թեղուց ստացվող հումքը անգնահատելի նյութ է դարձել ժողովրդական վարպետների համար:

Հայաստանի փայտը դուրս էր գալիս միջազգային շուկա, դրանից կահույք էին պատրաստում:

Հայկական փայտե նմուշների հարստությունից բեկորներ են պահպանվել: Դա պայմանավորված է ոչ միայն նյութի շուտ կոտորվելու, օդի և միջատների ազդեցությամբ ոչնչանալու հատկությամբ, այլև հասարակական-քաղաքական պայմաններով:

Հայաստանի տարածքում փայտի գեղարվեստական փորագրության մշակույթը եղել է դեռևս Վանի թագավորության (Ուրարտու) ժամանակ: Հայաստանի հեթանոսական տաճարներում գոյություն են ունեցել փայտե քանդակներ: Միջնադարից պահպանվել են փայտի գեղարվեստական փորագրության հայկական բացառիկ օրինակներ՝ հիմնականում եկեղեցիների դռներ, սյուների խոյակներ, գրակալներ: Իսկ կենցաղային իրերը պահպանվել են 18-րդ դարից:

Հայաստանում փայտի գեղարվեստական մշակման մեջ իր ուրույն տեղն է գրավում դաջերի պատրաստումը: Դաջը (դրոշմ, կաղապար) պատրաստվում էր փայտի ամուր տեսակներից՝ սամշիտ, ընկուզենի, ծիրանենի, տանձենի և այլն: Դաջի փորագրությունից էր կախված դաջազարդության որակը. որքան մաքուր էին փորագրված նախշերը, ամեն մի գիծը, կետը, այնքան լավ էին գործվածքի վրա ստացվում պատկերները:

Փայտի գեղարվեստական մշակմամբ ստեղծված հայկական շատ նմուշներ ժառանգաբար անցել են սերնդից սերունդ, օրինակ՝ քանդակազարդ գոպները, գործիքամանները, հավանգները /համեմունք տրորելու աման/ ու գուլպայի կաղապարները /նախատեսված էին լվացված գուլպաները կոկիկ, առանց ձևախախտման չորացնելու համար/:

Հայկական ժողովրդական մշակույթում առանձնահատուկ տեղ ունեն փայտե «դաղդղանները», որոնք թալիսմանի նշանակություն ունեին, այսինքն պետք է պաշտպանեին չար ոգիներից, չար աչքից: Դրանք շատ լայն կիրառություն են ունեցել հայ ժողովրդի կյանքում: Դաղդղան պատրաստելու ժամանակ ժողովրդական վարպետի միտքը պետք է անապյման անաղարտ լիներ, առանց բացասական հույզերի, անհրաժեշտ էր ամբողջությամբ կենտրոնանալ դաղդղանի ստեղծման ընթացքի վրա: Տան համար կիրառվող մեծ դաղդղանները հիմնականում կախում էին մուտքի մոտ կամ ներսում՝ կենտրոնական սյան վրա: Դաղդղաններ

պատրաստում էին նաև մարդկանց համար, կախում էին նորածինների օրորոցներից ու դաստակից, ամրացնում նրա գլխաշորին կամ բարձին: Տարածված էր գյուղացու տնտեսության մեջ կարևոր տեղ գրավող խոշոր եղջերավոր անասունների վզից կամ պոզից դաղդղան կախելը: Դաղդղանը կիրառվել է նաև կահույքի, կուժերի ու կճուճների վրա: Դաղդղան պատրաստելիս սովորաբար սրբազան համարվող ծառերի փայտանյութ էին օգտագործում՝ ընկուզենու, կաղնու, բայց նաև՝ հաճարենու, պտղատու տարբեր ծառերի: Ըստ ձևի դաղդղանները լինում են հիմնականում լուսնաձև, խոյակերպ, ինչպես նաև եռանկյունաձև, երկարավուն (կախվում էին ուլունքաշարով և օգտագործվում այն դեպքում, երբ երեխա չէին ունենում), իսկ նորածինների համար նախատեսված դաղդղանները փոքր են՝ գլանաձև, խորանարդաձև կամ տափակ քառակուսի: Դաղդղանների վրա փորագրված նախշերը հիմնականում արևի, հավերժության, ջրի խորհրդանշաններ են: Տարածված են հավերժության նախշը, վեցից մինչև ութ թևանի վարդյակները, կեռիսաչը, տերևներն ու եռանկյունները, երբեմն նաև խաչերը:

Փայտի գեղարվեստական փորագրության ամենակարևոր առանձնահատկություններից է ժողովրդական հենքը, իրի կիրառական նշանակությամբ պայմանավորված գեղարվեստական ձևավորումը: Կարևոր է այդ իրերի մշակման, նրանց ձևերի, զարդանախշերի ավանդական ընկալումը, ինչը հաջորդաբար անցնում էր սերնդից սերունդ, վարպետից վարպետ, իրից իր:

Տես՝ <https://tigranmkrtumyan.wordpress.com/author/tigranmkrtumyan/>

## Փայտամշակում. Եկեղեցական դռներ

Փայտանյութը օժտված է զարմանալի հատկություններով: Ժողովրդական տնտեսության մեջ փայտանյութը ունի իր ուրույն տեղը: Փայտանյութը անփոխարինելի է կահույքի արտադրությունում, շինարարական աշխատանքներ կատարելիս և այլն: Այդ կենդանի և գեղեցիկ նյութից պատրաստված շինվածքները զարդարում են մեր կենցաղը: Փայտանյութի այդքան լայն օգտագործումը պայմանավորված է տեխնիկական բարձր հատկություններով: Մետաղի և քարի համեմատությամբ փայտանյութը հեշտ է մշակվում: Լինելով թեթև՝ ունի համեմատաբար մեծ ամրություն, ունի ցածր ջերմահաղորդականություն, լավ է սոսնձվում, հաճախ ունենում է գեղեցիկ արտաքին տեսք, լավ է գեղերեսվում և այլն: Փայտանյութը խոնավանալիս ուռչում է, իսկ չորանալիս՝ նագում, ծովում ու ճաքնքում: Փայտանյութը հեշտությամբ այրվում է և փտում է: Գոյություն ունեն ծառերի շատ տեսակներ և բոլորն էլ օգտագործվում են տարբեր նպատակների համար: Այն ծառերը, որոնց պսակը ծածկված է տերևներով կոչվում են սաղարթավոր (կաղնի, կեչի, լորենի, հացենի, հաճարենի և այլն) , իսկ փշերով ծածկվածները՝ փշատերև (սոճի, եղևնի, մայրի, կվեճի և այլն):

Փայտանյութի կառուցվածքը 1-ծուծ, 2-ծուծային ճառագայթներ, 3-միջուկ, 4-խցանային շերտ, 5-քրծեն (լոտային շերտ), 6-բնափայտի շերտ (սպիտկեն), 7-կամբիա

(նրբակեղևային շերտ), 8-տարիքային շերտեր (օղակներ) Միջուկը կազմված է մահացած, իսկ ենթակեղևաշերտը՝ կենդանի բջիջներից:

Կտրումը փայտանյութի մշակման ամենատարածված եղանակն է: Փայտանյութի կտրումն իրականացվում է զանազան կտրող գործիքներով:

Փայտանյութի կտրմամբ մշակման կարևոր և պատասխանատու գործողություններից է սղոցումը: Սղոցումը գործընթաց է, որի ժամանակ փայտանյութը բաժանվում է մասերի: Փայտանյութի սղոցումը կատարվում է ձեռնասղոցներով կամ ձեռքի էլեկտրական սղոցով:

Փայտանյութի կառուցվածքային հիմնական տարրերը, փայտատեսակները ըստ տեստուրայի.

Փայտանյութի լայնական կտրվածքի վրա անգեն աչքով տեսանելի է ծուծը, փայտանյութը՝ իր տարիքային շերտերով, կեղևը: Ծուծը գտնվում է բնի կենտրոնում, այն փխրուն հյուսվածք է, որը ճակատային կտրվածքում երևում է մուգ գույնի, 2–5մմ տրամագծով բծիկի տեսքով, իսկ շառավղային կտրվածքում երևում է ուղիղ կամ մուգ, նեղ ոլորունություն ունեցող գոտու տեսքով: Կեղևը ծածկում է համատարած օղակով ծառը և բաղկացած է վերին շերտից՝ կեղև, ու ներքին շերտից՝ քրծեն (լուբ):

Անտառային ծառատեսակների փայտանյութերն ունեն բաց գույնի երանգ: Ծառատեսակների մի մասի փայտանյութն ամբողջությամբ ունի նույն երանգը՝ կեչին, բոխին, լաստենին, իսկ մյուսների փայտանյութի կենտրոնական մասերը մուգ գույնի են՝ կաղնին, փիճին, սոճենին: Բնի մուգ երանգավորում ունեցող մասը կոչվում է միջուկ, իսկ դրան շրջափակող բաց երանգավորմամբ մասը կոչվում է բնափայտի շերտ (սպիտկեն, ենթակեղևաշերտ)

Կտրումը փայտանյութի մշակման ամենատարածված եղանակն է: Փայտանյութի կտրումն իրականացվում է զանազան կտրող գործիքներով:

Փայտանյութի հիմնական հատկություններն են՝ ֆիզիկական, քիմիական, մեխանիկական և տեխնոլոգիական:

Ֆիզիկական հատկություններն են՝ արտաքին տեսքը (գույնը, փայլը), հոտը, խոնավությունը և դրանից կախված փոփոխությունները (չորացումը, ուռչելը, ճաքճքումը, կորացումը), խտությունը, մեծակառուցվածքը, ձայնահաղորդականությունը, ջերմահաղորդականությունը և էլեկտրահաղորդականությունը: Գույնը փայտանյութի արտաքին տեսքի կարևոր բաղադրիչներից է. Այն հաշվի առնելով ընտրում են փայտանյութ՝ սենյակների երեսապատման, կահույքի, երաժշտական գործիքների, գեղարվեստական ձևավորման աշխատանքներում: Փայտանյութի գույնով որոշվում է, թե ինչ ծառատեսակից է պատրաստված իրը : Ծառատեսակների գունային ներկապնակն ունի գործնականում բոլոր գունապատկերային երանգավորումները, իսկ երանգավորումների փոխարկումները հաշվարկվում են բազմաթիվ գունատեսակավորության հարաբերակցությամբ:

Բոխու փայտանյութը բաց գորշագույն է, կաղնունը և հացենունը՝ մուգ դարչնագույն, ընկուզենունը՝ շագանակագույն: Ծատ ծառատեսակների փայտանյութեր կտրելուց հետո կորցնում են իրենց փայլը և բաց մթնոլորտում ձեռք բերում գորշ գույն:

Լաստենու փայտանյութը կտրվելուց հետո մզվում է և ստանում դեղնակարմրավուն գույն: Կաղնու փայտանյութը, երկար ժամանակ մնալով ջրի մեջ, գունափոխվում է և ստանում մուգ շագանակագույն երանգ: Իրենց հաստատուն գույնը պահում են կաղնու, տանձենու, շիմշատի և շագանակենու փայտանյութերը: Ծառատեսակները դասակարգվում են ըստ հիմնական գույնի:

Դրանք են՝ ա) Դեղնագույն - կեչի, եղևնի, լորենի, կաղամախի, բոխի, թխկի, բրգաձև սոճի, հացենի (սպիտակադեղնավուն կարմիր և վարդագույն երանգներով), ծորենի (կիտրոնադեղնավուն), թթենի (ոսկե- դեղնավուն), ալոճենի, թխենի (կարմրագորշադեղին,) բ) Գորշագույն - մայրի, բարդի, ծփենու միջուկ (բաց գորշավուն), հաճարենի, փիճի, լաստենի, տանձենի, սալորենի (կարմրագորշագույն), շագանակենի,

անձենի (արջածառ, դարչնագորշագույն), ակացիա (դեղնագորշագույն), անատոլիական ընկուզենի (կանաչագորշագույն)<sup>1</sup>:

Լայնական կտրվածքներում ներքին լարումները, եթե լինեն ամրության սահմանների մեծությամբ, ապա չորացման սկզբում փայտանյութի արտաքին մակերևույթում կառաջացնեն ճաքեր, իսկ չորացման վերջում՝ ներքին ճաքեր: Փայտանյութը չորանալուց հետո կունենա թերությունները: Ուռչելն առաջանում է փայտանյութի կապակցված խոնավության բարձրացման ժամանակ, որի արդյունքում մեծանում են փայտանյութի գծային չափերը և ծավալը: Փայտանյութի ուռչելիությունն ամենաշատն առաջանում է շառավղային կտրվածքում թելերի ուղղությամբ, ամենաքիչը՝ թելերի լայնքով: Կորացումն առաջանում է չորացման կամ խոնավացման ժամանակ երկայնական կտրվածքով փայտանյութի ձևի փոփոխությունից: Փայտանյութի կորացումը կարող է լինել երկայնքով և լայնքով: Երկայնքով կորացումն ազդում է փայտանյութի ձևի փոփոխության վրա, շառավղային և շոշափողային ուղղություններով չորացման տարբերության արդյունքում: Ծուծային տախտակների կորությունն ի հայտ է գալիս չորացման ժամանակ եզրերի չափերի փոքրացումով, քանի որ շոշափողային ուղղությամբ սղոցված տախտակների չորացումն ավելի մեծ ծավալով է կատարվում, քան շառավղայինը: Հետևաբար՝ ինչքան տախտակը սղոցված է ծուծին մոտ, այնքան կորությունը մեծ կլինի: Միջուկավոր և ենթակեղևային տախտակների երկարությամբ կորացումն ունի աղեղնաձև տեսք, թելերի շոշափողային ուղղվածություն ունեցող տախտակների մոտ՝ ոլորաձև: Փայտանյութի կորությունից խուսափելու համար պետք է այն ճիշտ դասավորել, չորացնել և պահպանել: Փայտանյութը բնութագրվում է տարիքային շերտերի (օղակների) լայնության հատկանիշով, որը որոշվում է ճակատային կտրվածքում, լայնական ուղղությամբ 1սմ հատվածում գտնվող օղակների քանակով:

Փշատերև ծառատեսակների փայտանյութերի հատկությունները լավանում են, եթե 1 սմ հատվածում առկա է 3-ից ոչ պակաս և մինչև 25 տարիքային օղակ: Սաղարթավոր օղակաանոթային ծառատեսակների փայտանյութում տարիքային օղակներն ավելանում են ուշահաս գոտու հաշվին, որի պատճառով ավելանում են փայտա Փայտանյութերի բնութագրումը՝ հատկություններով Փայտե իրեր պատրաստելու համար խիստ կարևոր է իմանալ, թե ձեռքի տակ եղած փայտանյութն ի՞նչ ծառատեսակից է՝ սաղարթավոր, թե՞ փշատերև: Ընտրված շինվածքամասի պատրաստման համար անհրաժեշտ փայտանյութի ընտրությունը որոշվում է ըստ դրա հատկությունների:

Տես՝ Հանրակրթական հիմնական դպրոցի << Տեխնոլոգիա առարկայի>> ծրագիր: 5-7-րդ դասարանների/ 2012 էջ 54-67:

Ստորև ներկայացվում են առավել տարածված ծառատեսակների հատկությունները: Քանդակագործության համար ամենալավ հասակ ունեցող ծառերը 60—100 տարեկաններն են:

Լորենու տախտակները շատ խոնավածուծ են, ուստի դրանցից պատրաստված իրերը խոնավ միջավայրում ուռչում են և ծովում: Այդ պատճառով դրանք հարկավոր է պահել չոր պայմաններում: Լորենին ընդունակ է լավ հղկման, նա չորանալիս կորցնում է իր ծավալի 14-15 տոկոսը: Նրա տեսակարար կշիռը հավասար է 0,48: Լորենու վերաբերյալ տվյալները վերաբերվում են նաև բարդենուն, ուռենուն և լաստենուն: Բայց լաստենու տեսակները շատ են՝ կարմիր, սև և սպիտակ, որոնցից պատրաստված իրերը շատ գեղեցիկ են լինում: Այդ բոլոր տեսակներն ունեն գեղեցիկ տեքստուրա և քանդակվում են հեշտությամբ: Կաղնին շատ ամուր և երկարակյաց է: Նրա տեսակարար կշիռը հավասար է 0,71: Կաղնին գործածվում է նավաշինության, կահույքաշինության, ատաղձագործության և այլ բնագավառն երում: Կաղնու ծառը ապրում է մինչև 2000 տարի, գործածության ամենալավ տարիքը կարելի է համարել 80—200 տարիները: Կաղնու տեքստուրան շատ գեղեցիկ է և ալիքավոր, բնափայտը կազմված է շատ կարծր բջիջներից, բաժանված անթիվ ծակոտիներով. իր տեքստուրայի և ծակոտիների պատճառով քանդակագործության մեջ քիչ է գործածվում:

Կաղնու տախտակից պատրաստված իրերն առհասարակ պատում են մոմի մաստիկայով և շատ քիչ են հղկում, պատճառաբանելով, թե այն որոշ չափով սևացնում և կորցնում է առարկայի փայլը: Մակայն փորձը ցույց է տվել, որ դա ճիշտ չէ: Կաղնուց պատրաստված պահարանը և այլ իրեր, որ հղկված են, տարիների ընթացքում չեն գունափոխվել: Սևանալու գլխավոր պատճառներից մեկը պետք է համարել անհմուտ վարպետների աշխատանքը, երբ նրանք ձեռք գործածում են չափից ավելի: Հմուտ վարպետը կաղնու փայտանյութից պատրաստված իրերը պեմզայով հղկելուց հետո ծակոտիները մաքրում է խոզանակով, հեռացնելով զանազան օտար նյութերը ծակոտիներից: Այդ կերպ աշխատելով կստացվի հիանալի հղկում: Այդ դժվարություններն են պատճառը, որ վարպետները հաճախ խույս են տալիս կաղնին հղկելուց: Թխկին տարածված է Ռուսաստանի միջին մասում և Կովկասում: Բնափատը ամուր է և ալիքավոր գեղեցիկ տեքստուրայով: Սա գործ է ածվում կահույքի, շինարարության, արդյունաբերության և քանդակագործության մեջ: Լեռնային թխկին, որը հայտնի է յավոր անունով, թանկ է գնահատվում: Դրանից պատրաստված շութակները լավ հնչունականություն, ունեն և բարձր են գնահատվում: Գործածության համար պիտանի կարելի է համարել 80-130 տարեկան ծառերը: Թխկին շատ շուտ են ուտում միջատները: Միջատները նրա քաղցր ու բուրավետ հյութը ծծելու համար փորում են այն 10—20 սմ խորությամբ և բնակվում այնտեղ: Թխկենուց պատրաստված իրը թափանցիկ հղկումից հետո դիտելիս սաղափի տպավորություն է թողնում: Նրա բնափայտի մեջ պատահում են խճված մասեր, որոնք իրենց տեքստուրայով հիշեցնում են կորիլյան կեչին: Թխկենու խճված մասերից իրեր պատրաստելը պահանջում է գերլարված աշխատանք: Այդ պատճառով էլ վարպետները հաճախ խուսափում են դրանից և թանկագին մասերը կրակին մատնում: Թխկենու այդ բոլոր որակական հատկանիշներն ունի նաև թեղին, որը առաջինից տարբերվում է իր գույնով: Այդ երկու փայտատեսակների ծավալային կշիռը հավասար է 0.6: Տանձենին շատ ամուր և խիտ բնափայտ ունի: Ծավալային կշիռը հավասար է 0.75: Այն քանդակագործության մեջ հատուկ տեղ է գրավում: Գործ է ածվում վիմագրության, փորագրանկարչության (գրավյատուրայի) մեջ: Սովորաբար քանդակն արվում է տանձենու փայտի գլխի ուղիղ կտրվածքի վրա: Տանձենու տախտակներից պատրաստված կահույքը խիստ դիմացկուն է և թանկարժեք: Այն հիանալի հղկվում է: Նույնը կարելի է ասել ընկուզենու, մանավանդ վերջինիս շագանակագույնի վերաբերյալ: Ծիմշիրն իր կարծրությամբ ժողովրդի կողմից ստացել է պողպատե փայտ անունը: Նրա բնափայտն իր ծանրության պատճառով սուզվում է ջրի մեջ: Լավ է անում Սև ծովի ափերի որոշ մասերում:

Դրանից պատրաստված իրերը շատ գեղեցիկ են լինում հատկապես լավ հղկելուց հետո: Ծիրանի փայտից պատրաստում են արևելյան երաժշտական գործիքներ, գեղարվեստական սկահակներ և այլ իրեր: Մեզ մոտ ծիրանից կահույք պատրաստելը հազվադեպ երևույթ է: Մինչդեռ, օգտագործելի են նրա բոլոր կտորները կենցաղային առարկաների պատրաստելու տեսակետից: Հաճախ են ճկուն, ամուր, ալիքավոր և գեղեցիկ տեքստուրա ունեցող փայտ է: Նա ունի սպիտակ, վարդագույն, սպիտակ դեղնավուն գույն՝ բարակ շերտավորումով, շատ հեշտությամբ ենթարկվում է կեռման: Այդ հատկանիշից օգտվելով պատ բաստում են մեծ քանակությամբ այռոռներ և այլ կահկարասիներ: Քանդակագործության մեջ հաճախ է գործածվում և տալիս է լավ էֆեկտ: Կահույքաշինության համար գործածվելիք հաճախ են ու տախտակները նախապես լավ չորացվում են: Իսկ պատրաստված իրերը ծոմովելուց ազատ պահելու համար չոր տեղում են պահում: Կարմիր փայտը շատ ամուր է, խիտ և ծանր: Նա անում է դանդաղ: Տարեկան աճի շերտերը ալիքավոր են, գույնը՝ կարմիր, շագանակագույն և ոչ յուղային: Գործ է ածվում թանկագին կահույքի պատրաստման համար, ընդունում է լավ հղկում, դյուրությամբ քանդակվում է: Դրա պաշարների քիչ են անում Կովկասում,

Հեռավոր Արևելքում, Սախալինում: Սրանից պատրաստված ֆաներան կահույքները պատելու համար հիանալի նյութ է: Նոճին երկնասլաց ծառ է, որի բարձրությունը հասնում է մինչև 40 մետրի: Բնափայտը բաց դեղնագույն և վարդագույն է, ամուր, խիտ և ծանր, շատ դիմացկուն է: Տարեկան աճման շերտերը ալիքավոր են և հատուկ փայլով: Աճում է Սև ծովի ափերում, հատ-հատ և մանր խմբերով: Կիրառվում է թանկագին կահույք և քանդակապատ գեղարվեստական իրեր պատրաստելու համար: Ընդունում է շատ գեղեցիկ հղկում, ունի հատուկ, դուրեկան բուրմունք: Գիհին ունի երկու տեսակ՝ ծառեր և թփեր: Դրանցից ստարված անտառանյութը գործ է ածվում մատիտներ պատրաստելու համար, ուստի և հայտնի է մատիտափայտ անունով: Ծատ լավ նյութ է փորագրության համար: Տարեկան աճման շերտերը խճճված են, ունի շատ գեղեցիկ տեքստուրա: Նրա որոշ տեսակը որ կոչվում է արչա, տալիս է հատուկ յուղ, որից լաք են պատրաստում: Հոտը նման է պղպեղի հոտին: Աճում է Կովկասում, Դրինում և Միջին Ասիայում: Ծագանակենու փայտն ունի բաց դեղնավուն գույն<sup>1</sup>: Իր կազմվածքով շատ նման է կաղնուն և նրանից տարբերվում է իր հատուկ փայլով: Գործածվում է կահույք, մանրահատակ պատվաստելու համար: Լավ և դյուրությամբ փորագրվում, գունա պատվում ու քանդակվում է: Թավշային փափուկ փայտն ունի միջին կարծրություն և շատ թեթև է այդ անունը նա ստացել է իր թավշանման կեղևի պատճառով: Բնափայտը բաց դեղնավուն է, ոսկեգույն և շագանակագույն: Կեղևից պատրաստում են խցան» աճում է հեռավոր արևելքում, Ամուր գետի շրջակայքում և Սախալինում: Կաղամախին նման է բարդենուն: Ունի բաց սպիտակ գույն: Թեթև է, միջին կարծրությամբ: Գործածվում է լուցկու, թղթի արդյունաբերության՝ և տակառագործության մեջ, տարաներ ու ֆաներաներ պատրաստելու համար: Բնափայտը 30 տարեկանից հետո ենթակա է փտման ու միջատակերության: Այն աճում է ամենուրեք, հատ-հատ, խմբերով և անտառային մասսիվներով: Չինարին ունի գեղեցիկ բնափայտ, ալիքավոր տարեշերտերով, բաց դեղնավունից մինչև բաց շագանակագույն է: Գործածվում է կահույքաշինության մեջ: Ճկուն է և ծանր: Պատրաստում են գեղեցիկ տեքստուրայով ֆաներաներ, կահույքներ պատելու համար: Արտասահմանյան զանազան երկրներից ներմուծված անտառանյութերը մեծ մասամբ արևադարձային են և թանկարժեք: Այդ բոլոր տեսակներն ամուր են, ծանր և խիտ կազմվածք ունեն: Դրանցից են՝

ա) ԱՄՆ-ի մամոնտի ծառը, որ շատ արագ է աճում և հսկայական բարձրություն ունի: Ամուր ու խիտ է, կարմիր ու շագանակագույն:

Տես՝ Հանրակրթական հիմնական դպրոցի <<Տեխնոլոգիա>> առարկայի չափորոշիչ, /1-7-րդ դասարանների/2012.-էջ 2-6:

- բ) Հիմալայան, կալիֆորնյան և լիվանական Ծատ դիմացկուն է, փտելուց և զանազան հիվանդություններից զերծ: Գույնը կարմիր և շագանակագույն: Ծանր է ու ամուր:
- գ) Էվկափայտը, շատ արագ աճող ծառ է: Ծծում է մեծ քանակությամբ խոնավություն և արձակում օդի մեջ::

Տնկվում է խոնավ, հաճախ անձրևառատ շրջաններում՝ հողերը չորացնելու համար: 7-8 տարեկան ծառերը գործածվում շինարարության մեջ: Նյութը ամուր է, խիտ ու դիմացկուն:

դ) Կարմիր ծառ՝ աճում է Ավստրալիայում, Կենտրոնական Ամերիկայում և այլ երկրներում: Բարձր, վերասլաց է, գույնը՝ կարմիր և կարմիրշագանակագույն: Տարեկան աճի շերտերը շատ խիտ են: Փայտը ծանր, և ամուր է, գործածվում է թանկագին կահույքի, երկաթուղային հատուկ վագոնների և մարդատար նավերի մեջ հատուկ կահավորումներ պատրաստելու համար: Ունի գեղեցիկ տեքստուրա և ընդունում է լավ հղկում:

ե) Ամարատը, որ նման է կարմիր փայտին: Աճում է Աֆրիկայում և այլ արևադարձային գոտիներում: Գործ է ածվում նույնպես կահույք և այլ իրեր պատրաստելու համար: Լավ



քանդակվում և հղկվում է: նյութը շատ կարծր ու ծանր է, տարեկան աճի խիտ օղակներով: զ)Պոլիսանդրը, որ կարմիր, մուգ շագանակագույն փայտանյութ է, ծածկված է սև երակներով: Տեքստուրան շատ գեղեցիկ է: Գործածվում է մեքենաշինության մեջ և թանկագին կահույք ու իրեր պատրաստելու համար: Բնափայտը շատ ամուր ու ծանր է, ունի տարեկան աճի խիտ օղակներ<sup>1</sup>:

է)Սև փայտը, որ ներմուծվում է Բիրմայից և Վիետնամից, ունի խիտ հյուսվածքներ: Ամուր է և ծանր ու սև գույնի՝ ինչպես ածուխը: Գործածվում է մեքենաշինության, ատաղձագործության մեջ և գեղարվեստական իրեր պատրաստելու համար: անյութի ամրությունը, խտությունը և կարծրությունը:

Փայտե եկեղեցիներ 1714 թվականին կառուցված Կիժի կղզիները պահում են հնագույն առեղծվածներ և գաղտնիքներ՝ փոխանցելով իրենց ժամանակի մթնոլորտը: Կիժի կղզին, ինչպես և դրա վրա գտնվող տաճարները, համարվում է ՅՈՒՆԵՍԿՕ -ի ժառանգություն: Եվ, չնայած այսօր դրանցում ոչ ոք չի ծառայում, այս ճարտարապետական հուշարձանները շարունակում են իրենց պատմությամբ գրավել ծխականների ուշադրությունը:

Շատերին հետաքրքրում է, թե որ կղզում են գտնվում Կիժի փայտե եկեղեցիները և ինչպես հասնել այնտեղ: Կղզին, ավելի ճիշտ՝ եկեղեցու բակը, որի վրա գտնվում է տաճարը, գտնվում է Կարելիայի Օնեգա լճի վրա: Նրան ամենամոտ քաղաքը Պետրոզավոդսկն է, որտեղից կարող եք հասնել թանգարան-արգելոցի տարածք, որտեղ գտնվում է Տիրոջ Պայծառակերպության լեգենդար տաճարը: Այն կառուցվել է մեկ այլ հնագույն եկեղեցու տեղում, որը ժամանակին այրվել է կայծակի հարվածից: Տիրոջ Պայծառակերպության Նոր եկեղեցու շինարարությունը սկսվեց 1714 թվականի հունիսի 6 -ին, և Բարեխոսության եկեղեցին դարձավ այս ճարտարապետական գլուխգործոցի ստեղծման նախատիպը: Սուրբ ԱստվածածինՎոլոգդայի շրջանում: Ըստ ռուսական ճարտարապետության ավանդույթների, եկեղեցին կառուցվել է փայտից, և, ըստ որոշ աղբյուրների, շինարարության գործընթացում ոչ մի մեխ չի օգտագործվել: Փաստորեն, այժմ տաճարում մեխեր կան, բայց դրանք գտնվում են միայն գմբեթների մեջ: Նույն սենյակում նրանք չեն: Այս տաճարը երբեք չի ջեռուցվել, և այնտեղ ծառայել է միայն ամառային ժամանակ... Այնուամենայնիվ, եկեղեցու բակում կառուցվեց մեկ այլ ձմեռային եկեղեցի, որում ծառայություններ էին կատարվում:

Տես՝ Տեխնոլոգիա: Ա. Զովսեփյան, Ա. Զարությունյան, Մ. Աղաջանյան ,Լ. Վերոյան: Տիգրան մեծ, Էջ 26-40

Կա լեգենդ, որ զավթիչները դեռ ծրագրում էին ոչնչացնել Կիժի կղզին և նրա բոլոր տեսարժան վայրերը, սակայն, տեսնելով բարեխոսության և կերպարանափոխության եկեղեցիների անհավատալի, զրեթե ոչ երկրային գեղեցկությունը, ռմբակոծիչներից թռչող օդաչուները ռումբեր են նետել լիճը: Այնուամենայնիվ, այս փաստի վերաբերյալ ոչ մի փաստաթղթային ապացույց դեռ չի հայտնաբերվել: Կիժի կղզու Վերափոխման եկեղեցին կառուցված է սոճու գերաններից, իսկ դրա գմբեթներն ու տակառները ծածկված են այսպես կոչված « ploughshare»- փոքր ափսեներ՝ փորագրված կաղամախուց: Նման նյութերի օգտագործումը ծնում է գերանի դարչնագույն երանգների զարմանահրաշ համադրությունը՝ արծաթափայլ գմբեթներով, ծածկված կաղամախի թիթեղներով, որոնք արտացոլում են շրջակա բնության բոլոր գույները: Զյուսիսային ցուրտ երկնքի ֆոնին այս նկարը ստանում է Էլ ավելի մեծ գեղեցկություն և առեղծված:

**Պայծառակերպություն եկեղեցի Կիժի կղզում**

Ամբողջությամբ փայտե շինությունը, որը պսակված էր 22 գմբեթով, դրանով իսկ տալով ռուսական հեթաթից արքայական աշտարակի տեսք, թվագրվում է 1714 թվականին: Ենթադրվում է, որ այն կառուցվել է 16 -րդ դարի վերջին այրված եկեղեցու տեղում: Այս

ճարտարապետական մեծագույն գլուխգործոցի ստեղծման վերաբերյալ երկու հիմնական լեգենդ կա: Առաջինն այն է, որ Պայծառակերպությունն եկեղեցու նախագծողն ու կառուցողը ոչ այլ ոք էր, քան ինքը՝ կայսր Պետրոս Մեծը: Նա նավարկեց Օսեգա լճի վրա, ափին տեսավ թափված անտառ և հրամայեց կառուցել մի հրաշք, որը հավասարը չունի և երբեք չի լինի: Երկրորդ լեգենդը ասում է, որ Կիժի կղզու Վերափոխման եկեղեցին կառուցել է տաղանդավոր արհեստավոր՝ Նեստոր անունով: Ավարտելով աշխատանքը՝ նա կացինը գցեց Օսեգա լճի ջրերի մեջ. Դա արվեց այնպես, որ ոչ ոք երբեք չհամարձակվի նորից ինչ-որ հոյակապ բան կառուցել: Ինչ էլ որ լինի, և՛ Պետրոսի, և՛ Նեստորի ուխտը կատարված է. Զավանաբար, դեռևս չի ծնվել մի վարպետ, որի տաղանդը կարող է գերազանցել Տիրոջ Պայծառակերպության եկեղեցու հիմնադիրների հմտությունը:

### Բարեխոսության եկեղեցի

Հայտնի է, որ բարեխոսության եկեղեցին մի քանի անգամ այրվել և վերակառուցվել է, և այն տեսքը, որով մենք հիանում ենք այսօր, այն ձեռք է բերել միայն 1764 թվականին: Տաճարը հագեցած է բարձր գավիթով և գավիթով. Ներքին հարդարանքը ներկայացված է բարձր պատկերապատկերով, որի շատ տարրեր կորել են 20 -րդ դարի առաջին կեսի արյունալի իրադարձությունների ժամանակ: 50 -ականներին այն վերականգնվել է, և այսօր այն կարող են տեսնել ինչպես ծխականները, այնպես էլ զբոսաշրջիկները:





### Միքայել հրեշտակապետի մատուռ















Միքայել հրեշտակապետի մատուռը հանդիսանում է շքեղ Կիժի անսամբլի մեկ այլ մասը: Այն փոքրիկ փայտյա շինություն է՝ գավիթով և զանգակատնով, որը կառուցվել է 19 -րդ դարի սկզբին: Շենքը Կիժի կղզի է բերվել Լենինկոզերո գյուղից, Օսեգայի հյուսիսային մասում: Այս շենքը, ինչպես կղզու շատ ուրիշներ, բնորոշ տեսք ունի:

ճարտարապետական գլուխգործոցներուսական Հյուսիս. Պսակված է կրկնակի տանիքով և փայտե բարձր գմբեթով՝ խաչով: Նրա գլխավորը տարբերակիչ հատկություն-կիսակառույց զանգակատուն-զանգակատուն, որը բարձրանում է մուտքի դահլիճի վրայով: Ինտերիերի դեկորացիան նույնպես յուրահատուկ է՝ բարձր պատկերապատ, միաձուլված՝ երկնային »առաստաղին: Այն թվագրվում է 18 -րդ դարով:

<https://shimanovskadm.ru/hy/riga/kizhi-fakty-derevyannye-cerkvi-ostrova-kizhi-gde-nahoditsya.html>

## Համաշխարհային ժառանգության փայտե եկեղեցիներ

Եկեղեցի	Տեղագրություն	Ժամանակաշրջան	Կոորդինատներ	Լուսանկար
Ֆրանցիսկ Ասիզեցու կաթոլիկ եկեղեցի	Հերվարտով (Պրեշովի երկրամաս)	15-րդ դար	<a href="#">49°14'50" հս. լ.</a> <a href="#">21°12'15" ավ. ե.</a>  <a href="#">HGЯO</a>	
Բոլոր սրբերի եկեղեցի	Տվրոդշին (Ժիլինայի երկրամաս)	15-րդ դար	<a href="#">49°20'10" հս. լ.</a> <a href="#">19°33'30" ավ. ե.</a>  <a href="#">HGЯO</a>	

Կեժմարոկի փայտաշեն երեղեցի	Կեժմարոկ (Պրեշովի երկրամաս)	1717	<a href="#">49°08'35" հս. լ. 20°25'50" ավ. ե.</a>  <a href="#">HGЯO</a>	
Լեշտինախի փայտաշեն եկեղեցի	Լեշտինախ (Ժիլինայի երկրամաս)	1688	<a href="#">49°11'25" հս. լ. 19°21'37" ավ. ե.</a>  <a href="#">HGЯO</a>	
Յրոնսեկի փայտաշեն եկեղեցի	Յրոնսեկ (Բանսկա Բիստրիցայի երկրամաս)	1726	<a href="#">48°38'56" հս. լ. 19°09'17" ավ. ե.</a>  <a href="#">HGЯO</a>	
Բեֆրուա			<a href="#">48°38'56" հս. լ. 19°09'19" ավ. ե.</a>  <a href="#">HGЯO</a>	
Սուրբ Նիկոլասի եկեղեցի	Բողրուզալ (Պրեշովի երկրամաս)	1658	<a href="#">49°21'09" հս. լ. 21°42'28" ավ. ե.</a>  <a href="#">HGЯO</a>	
Սուրբ Միքայել հրեշտակապետի եկեղեցի	Լադոմիրովա (Պրեշովի երկրամաս)	1742	<a href="#">49°19'42" հս. լ. 21°37'35" ավ. ե.</a>  <a href="#">HGЯO</a>	
Սուրբ Նիկողայոսի եկեղեցի	Ռուսկա Բիստրա (Կոշիցեի երկրամաս)	18th century	<a href="#">48°51'25" հս. լ. 22°17'47" ավ. ե.</a>  <a href="#">HGЯO</a>	

## Եզրակացություն

Ուսումնասիրելով փայտարվեստը, դրա կիրառման միջոցներն ու առանձնահատկությունները պարզ է դառնում նախ այն, որ այն պահանջում է պրոֆեսիոնալ մտեցում սկսած գործածվող նյութերը ճիշտ կիրառելուց մինչև գունագիտություն:

Փայտարվեստը շարունակաբար զարգացող արվեստ է քանի որ միայն դրա շնորհիվ է այն կարողանում արձագանքել հասարակության ամենատարբեր շերտերի պահանջներին և մշտապես լինել պահանջված: Բացի դա, այն ունի կիրառության բազմազանություն, այսինքն այն կարող է կիրառվել և՛ կենցաղում, և եկեղեցիներում և՛ շինարարական տարբեր տեսակների պարագայում և յուրաքանչյուր դեպքում նորովի դսևորել իր յուրօրինակությունը:

Փայտանյութը օժտված է զարմանալի հատկություններով: Ժողովրդական տնտեսության մեջ փայտանյութը ունի իր ուրույն տեղը: Փայտանյութը անփոխարինելի է կահույքի արտադրությունում, շինարարական աշխատանքներ կատարելիս և այլն: Այդ կենդանի և գեղեցիկ նյութից պատրաստված շինվածքները զարդարում են մեր կենցաղը: Փայտանյութի այդքան լայն օգտագործումը պայմանավորված է տեխնիկական բարձր հատկություններով:

Թեմայի արդիականությունը

Թեման արդիական է քանի որ հիմնական դպրոցը ավարտելուց հետո որոշ աշակերտներ ուսումը կշարունակեն միջին մասնագիտական ուսումնարաններում, որը կնպաստի որոշ արհեստների տիրապետմանը:

Թեմայի նպատակն է ուսումնասիրել փայտամշակման տեխնոլոգիայի դասերի կազմակերպման ընթացքը և առաջարկել ժամանակակից ակտիվ մեթոդներով դասերի կազմակերպման նոր ձևեր:

Խնդիրներն են՝

1. Ուսումնասիրել և վերլուծել փայտամշակման թեմային վերաբերվող գրականություն (չափորոշիչներ , ծրագրեր, դասագրքեր, մեթոդական ձեռնարկներ և այլն):

2. Ստեղծել էլեկտրոնային նյութեր համապատասխան դասի պլանների:

Տեխնոլոգիան գիտություն է մարդու կողմից իր համար տեղեկատվության, մատերիայի, էներգիայի փոխակերպման և օգտագործման համար:

Տեխնոլոգիա բաժինը շարունակում է նոր մտահաղացումներ, օգնում է կողմնորոշվել մասնագիտության ընտրության հարցում, օգնում է առաջադրանքների կատարմանը:

Տեխնոլոգիա առարկան օգնում է աշակերտներին, որ նրանք իմանան և կարողանան օգտագործել ձեռքի գործիքներն ու հարմարանքները նյութի մշակման համար:

Տեխնոլոգիա առարկայի խնդիրն է դաստիարակել աշակերտին պատասխանատվության զգացում տեխնոլոգիական պրոցեսի որակյալ կատարման համար:

Տեխնոլոգիա առարկայի խնդիրն է աշակերտների մոտ ձևավորել կարողություններ, հմտություններ և այլն:

## Օգտագործված գրականության ցանկ

1. <https://shimanovskadm.ru/hy/riga/kizhi-fakty-derevyannye-cerkvi-ostrova-kizhi-gde-nahoditsya.html>

2. Հանրակրթական հիմնական դպրոցի <<Տեխնոլոգիա>> առարկայի չափորոշիչ, /1-7-րդ դասարանների/2012.-էջ 2-6:

3. Հանրակրթական հիմնական դպրոցի << Տեխնոլոգիա առարկայի>> ծրագիր: 5-7-րդ դասարանների/ 2012 էջ 54-67:

4. Տեխնոլոգիա: Ա. Հովսեփյան, Ա. Հարությունյան, Մ. Աղաջանյան ,Լ. Վերդյան: Տիգրան մեծ, էջ 26-40:


Հավելված



Աստվածածնի բարեխոսության եկեղեցի



Միքայել հրեշտակապետ մատուռ



Քարեխոսության եկեղեցի







